ԿԱՐԾԻՔ

Արման Վաչագանի Ավետիսյանի ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա և սպորտ) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «10-12 տարեկան ձյուդոիստների ֆիզիկական պատրաստության գործընթացի կատարելագործումը քրոսֆիթի տարրերի կիրառմամբ» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Աշխարհում լայն տարածում ու մեծ ճանաչում ունեցող ձյուդո ըմբշամարտն ընդգրկված է օլիմպիական մարզաձևերի ընտանիքում: 1964 թվականին իր նորամուտն օլիմպիական 18-րդ խաղերում նշելով՝ ձյուդոն անընդհատ զարգացել ու կատարելագործվել է, փոփոխությունների են ենթարկվել կանոններն ու տարազը, իսկ մեծաթիվ երկրների միջև դաժան մրցակցությունը ոլորտի մասնագետներին թելադրել է փնտրել մարզման գործընթացի կատարելագործման նոր և առաջադեմ ուղիներ:

Այդ իմաստով հետաքրքիր է, թե որքանով է արդյունավետ հայցորդի՝ 10-12 տարեկան մարզիկների շրջանում մարզման՝ որպես նորարարական մոտեցում՝ Քրոսֆիթի կիրառումը տվյալ տարիքային խմբի երեխաների ֆիզիկական զարգացման առումով: Նման հիմնախնդրի ուսումնասիրումներն ու պարզաբանումները կարևոր են նաև այն առումով, որ նմանատիպ աշխատանքներ նշված տարիքի ձյուդոիստների վերաբերյալ չկան, ինչն էլ ընդգծում է աշխատանքի կարևորությունն ու արդիականությունը:

Ատենախոսությունը կազմում է 159 համակարգչային էջ և բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից, գործնական առաջարկություններից, հավելվածից, ներառում է երկու ակտ, 13 աղյուսակ, 3 նկար, 20 տրամագիր, 7 հավելված: Գրականության ցանկում բերված են տարալեզու մատենագիտական 168 սկզբնաղբյուրներ:

Ներածությունում հայցորդը հիմնավորում է թեմայի արդիականությունը, մանրամասն ներկայացնում է հետազոտության նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, հետազոտության տեսական ու գործնական նշանակությունը, ինչպես նաև պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները:

Առաջին գլխում Ա.Ավետիսյանը, գրականության աղբյուրների ուսումնասիրության և վերլուծության հիման վրա, ներկայացրել է սեփական տեսակետը. ինչի° վրա է պետք առանձնահատուկ ուշադրություն դարձնել, պատանի ձյուդոիստների մարզումներին

նախորդող և, հատկապես, դրանց պլանավորման ժամանակ ի՞նչ նորարարական մոտեցումներ ցանկալի է կիրառել, նրանց համար կարևոր շարժողական ընդունակությունների մշակման, զարգացման ու կատարելագործման նպատակով, բերելով սեփական օրինակը՝ քրոսֆիթի տարրերի կիրառմամբ:

Ատենախոսության երկրորդ գլխում հեղինակը մանրակրկիտ նեկայացրել է հետազոտության ընթացքում կիրառված բոլոր մեթոդները, մասնակի խնդիրները և հետազոտության կազմակերպումը:

Թվային տվյալները մշակվել են SPSS 27 ծրագրով:

Ա.Ավետիսյանը աշխատության երրորդ գլխում ներկայացնելով ոլորտի ՀՀ առաջատար 30 մարզիչների հետ կազմակերպված սոցիարցմամբ ճշտված, նրանց հավաստմամբ՝ պատանի ձյուդոիստների համար առավել կարևոր շարժողական ընդունակությունները, վերջինիս կատարելագործման վարժությունները, ԸՖՊ-ին և ՀՖՊ-ին հատկացվող ժամաքանակն ու մարզիչների՝ քրոսֆիթի մարզման մեթոդների տիրապետումը, շեշտում է ԸՖՊ-ի մակարդակի բարելավման անհրաժեշտությունը՝ կիրառելով նորարարական մեթոդներ և միջոցներ, և, որպես մեթոդներից մեկը, առաջարկում է քրոսֆիթը:

Չորրորդ գլխում հեղինակը ներկայացնում է մանկավարժական գիտափորձի ընթացքն ու թեստավորման արդյունքները, որոնք հաստատում են, որ ֆիթնեսում կիրառվող վարժու-թյուններով կառուցված փորձարարական ծրագրով մարզվողների ֆիզիկական պատրաստ-վածությունն ավելի մեծ աճ է գրանցել փորձարարական խմբում, ի տարբերություն գործող ծրագրով մարզվող ստուգողական խմբի:

Ատենախոսության հիմնադրույթները հրատարակվել են գիտական հոդվածների ձևով և ներդրվել գործնական կիրառության, ինչը հաստատում են համապատասխան երկու ակտերը:

Ըստ արժանվույն գնահատելով Ա. Ավետիսյանի ատենախոսությունը՝ հարկ ենք համարում նշել աշխատանքում տեղ գտած որոշ թերություններ և բացթողումներ.

1. էջ 3. Պարբ.4. Ձյուդոյում, որն աշխարհահռչակ ճապոնական մարտարվեստ է,...- ճիշտ կլիներ,- լայն ճանաչում կամ տարածում ունեցող...,
2. Փորձարարական ծրագրի արդյունավետության օբյեկտիվությունն ավելի բարձր կլիներ, եթե հեղինակը փորձարարական և ստուգողական խմբերում ավելի մեծ թվով մարզիկներ ներգրավեր,

3. աշխատանքում կան տպագրական և ուղղագրական վրիպակներ (էջեր.3, 29, 34, 44, 50, 62, 83, 99, 129):

Նշված նկատառումները չեն կարող ազդել ատենախոսության բարձր գնահատականի և գիտագործնական նշանակության վրա: Ատենախոսության բովանդակության հիմնական դրույթները լիովին ներկայացված են սեղմագրում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ինչպես և ստացված տվյալների հավաստիությունն ու արված հիմնավոր եզրակացությունները հիմք են տալիս Արման Վաչագանի Ավետիսյանի «10-12 տարեկան ձյուդոիստների ֆիզիկական պատրաստության գործընթացի կատարելագործումը քրոսֆիտի տարրերի կիրառմամբ» թեմայով ատենախոսությունը համարել ավարտուն, ինքնուրույն գիտական աշխատանք:

Ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ ատենախոսն արժանի է հայցվող մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի՝ ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա և սպորտ) մասնագի-տությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս

ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայի ֆիզիկական պատրաստության և սպորտի ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Բ. Լ. Երիցյան

Հաստատում եմ մ. գ. թ., պրոֆեսոր Բ.Լ.Երիցյանի ստորագրությունը

ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայի կադրերի բաժանմունքի պետ,
մայոր Հ. Ս. Օհանջանյան